

Համարը 5  
Տիպը Պաշտոնական պարզաբանում  
Սկզբնաղբյուրը  
Ընդունող մարմինը Արդարադատության  
նախարարություն

Տեսակը Մայր  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան  
Ընդունման ամսաթիվը 25.08.2004

Ստորագրող մարմինը  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը

Ստորագրման ամսաթիվը  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ԹԻՎ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԻՍԻ 1-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 161 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1042-Ն ՈՐՈՇՄԱՆ ՈՒՅԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ, 62-րդ հոդվածի 6-րդ և 91-րդ հոդվածի 5-րդ մասերի պահանջներից ելնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը հայտնում է, որ՝

[Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի 2004 թվականի օգոստոսի 11-ի թիվ 43 \(342\) համարում հրապարակված՝ 2004 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի ապրիլի 11-ի թիվ 161 որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1042-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից՝ օգոստոսի 12-ից, թեև որոշման ուժի մեջ մտնելու ժամկետ է նշված 2004 թվականի օգոստոսի 1-ը, քանի որ, այն ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները սահմանափակող, գործունեության նկատմամբ հսկողություն կամ վերահսկողության կարգ սահմանող կամ փոփոխող, ինչպես նաև դրանց վիճակն այլ կերպ վատթարացնող նորմեր չի պարունակում:](#)

Իրավական ակտերի փորձաքննության  
վարչության պետ՝

Կ. Խտրյան